

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԿՐԵԿԸՐԻ ԷՔԻԶՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԽԱԿՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԿՐԵԿԸՐԻ ԷՔԻԶԵԱՆ,
ՈՐ Ի ՄԷՅՆԹ ՓԻԹԸՊՈՒՐԿ, ԱՄՆ**

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժան պրն Էքիզեան,

Անկեղծ գոհունակութիւն է Մեզ համար ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից բարի վկայութիւններ լսել հաւատաւոր հայորդոյ եկեղեցանպաստ արգասաւոր գործունէութեան մասին, որն արժանիօրէն սէր ու յարգանք է բերել Ձեզ Արեւելեան թեմում:

Մեր ժողովրդին առաւելագոյնս ծառայելու եւ միասնական պահպանելու, հայորդեաց ազգային եւ եկեղեցական կեանքի շէնութեանն ու պայծառութեանը աւանդ բերելու ազնիւ նուիրումով Դուք մեծագումար նուիրատուութեամբ Ձեր մասնակցութիւնը բերեցիք Սուրբ Յակոբ եկեղեցու կառուցման գործում: Մեզ համար մեծ ուրախութիւն է, որ ԱՄՆ հայոց Արեւելեան թեմ Հովուապետական Մեր այցի օրերին պիտի կատարենք նորակառոյց եկեղեցու օծման արարողութիւնը, եւ Միացեալ Նահանգներում եւս մէկ հայկական եկեղեցի իր շնորհաբաշխ դռները պիտի բացի հայորդեաց առջեւ: Ձեր բերած ջանքերն ու սրտաբուխ գոհողութիւնները՝ ի նպաստ Սուրբ Յակոբ եկեղեցու կառուցման, անգնահատելի ծառայութիւն են մեր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, որով Դուք մշտապէս պիտի արժանանաք համայն հայութեան երախտագէտ բարեմաղթանքներին:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում նաեւ հայրենաշինութեան նուիրական առաքելութեանը բերած Ձեր մասնակցութեանը: Անդամակցելով «Հայաստանի Մանուկների հիմնադրամի» Տնօրէնների մարմնին, Դուք կարելուք աւանդ էք բերում վերագարթօնքի շնչով ապրող Հայրենի մեր Երկրի բարգաւաճմանը եւ հայրենաբնակ Մեր զաւակների առջեւ ծառացած դժուարութիւնների յաղթահարմանը:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին եւ սիրով ընդառաջ թեմակալ ձեր առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ լինէք միշտ եռանդուն ու կորովաշատ եւ շարունակէք Ձեր գնահատելի ծառայութիւնը բերել մեր Մայր Եկեղեցուն եւ հաւատաւոր ժողովրդին:

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի Բարձրեալի շնորհների եւ ամենախնամ օրհնութեան:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2007 եւ ի թուին հայոց ՌՆԾԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 427